

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 8/12

6 հուլիսի 2017 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝
ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի
կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝

ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի «Մանկավարժության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը
վերակազմավորման եղանակով վերակազմակերպել ԵՊՀ «Մանկավարժության և
կրթության զարգացման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ